

կը մաքրէ սենեակին օդը: Արեւին ճառագայթները կը սպաննեն փնաստկար և վարակիչ հիւանդութեանց խոտածին մանրէները, որոնք կը դոնուին փոշիի մէջ և զանազան առարկաներու վրայ:

Արեւին ճառագայթները իրենց տուած տաքութեամբ կը չորցնեն և կը տաքցնեն բնակարանները:

Պէտք է մոռնալ, որ այն բնակարանը, ուր արեւ չի մտներ, հիւանդութիւնը շուտ կը մտնէ և բժիշկը շատ կը մտնէ:

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿԱՐՄԻՐ ԽԱՇԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Փարիզի Կ. Խաչի մասնագիտը Հայաստանի Կարմիր Խաչէն ստացած է երկար տեղեկագիր մը, Լէնինականի աղետին առթիւ իր գործունէութեան մասին, Կ'ամփոփենք այդ տեղեկագրին գլխաւոր կէտերը:

Երբ Լէնինականի երկրաշարժին լուրը հասաւ, Հայաստանի Կարմիր Ուսչին պատասխանատու քարտուղարը Բժ. Վ. Աղարբէզեան կազմակերպեց բժշկական խումբ մը, առաւ զեղերու մթերք մը և մեկնեցաւ Լէնինական: Թուրք Ղարաքիլիսա գիւղին մէջ բացաւ բուժակայան մը, որ օգնութեան կը հասնէր շրջանին բոլոր գիւղերուն:

Մէկ ամսուան մէջ օգնեց 3873 հիւանդի և վիրաւորի Ձգեստ և Կերակուր բաժնեց գիւղացիներուն: Օրական կը բաշխէր 3600—3700 ճաշ: Մանդարաշխութեան երկրորդ կայան մըն ալ բացաւ Դավշան — Ղշլաղ գիւղին մէջ, օրական տալով 2400—2500 ճաշ շրջակայ գիւղացիութեան: Կերակուրը կը բաղկանար միսէ և տաք սնունդէ: Առաջին օրերուն, մինչեւ ջաղացքներուն նորոգութիւնը, իւրաքանչիւր ճաշի հետ կը տրուէր կէս ֆունտ հաց:

Այսպէս միամսեայ գործունէութիւնով մը, Հ. Կ. Ուր գիւղացիութեան 60% ին կատարեց սնունդի, բժշկական և հագուստի օգնութիւն:

Հ. Կ. Ուր քաղաքին մէջ ալ հիմնեց սննդակայան մը, տալով օրական 3000 տաք ճաշ, կաթ՝ 600 ծծկեր երախաներու: Կերակուր ստացողներու թիւն էր 3046: Քաղաքին մէջ բացաւ նաև երկու թէյարան և երկու ամսուան մէջ 85235 գաւաթ թէյ բաշխեց:

Քաթթարլու գիւղին մանկապարտէզին սնունդը ինք ստանձնեց բաշխել: 25 մանուկներ, որոնք զուրկ էին խնամքէ աղքատութեան պատճառով, պատասպարեց Դիլիջանի հանգստատան մէջ: Աւելիին օգնելու համար նիւթական միջոց չունէր:

Այս օգնութեան կը մասնակցէին խորհրդային Հանրապետութեանց Կ. Ուսչերու արտասահմանի մասնաճիւղերը: Մասնաւորապէս Վրաստանի Կարմիր Ուսչն ու Ադրբէջանի Կարմիր Մահիկը մեծ օժանդակութիւն բերին: Ամերիկեան կոմիտէն 50,000 տոլար արամագրեց Հ. Կարմիր Ուսչին, մանուկներուն համար: